ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 21.07.2017թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի
թիվ ԳԲԽ-ԱՄ-2017/16

Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ)՝ քննելով «Ա և Ա Քոնստրաքշն» ՍՊԸ-ի 07.07.2017թ. ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲԽ-ԱՄ-2017/16 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. «Ա և Ա Քոնստրաքշն» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը

«Ա և Ա Քոնստրաքշն» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) Խորհրդին ներկայացրած 07.07.2017թ. բողոքով հայտնել է, որ բողոքի առարկա է հանդիսանում ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության կողմից հայտարարված «ՏԿՆ-ԲԸԱՇՁԲ-2017/2Շ» ծածկագրով բաց ընթացակարգը:

Հայտերը կազմվում և գնահատվում են «Գնումների մասին» ՀՀ օրենքի և ՀՀ կառավարության «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի համաձայն՝

ուստի գնահատող հանձնաժողովը հայտերը պետք է գնահատի հրավերի պահանջներին համաձայն, որը «ՏԿՆ-ԲԸԱՇՁԲ-2017/2Շ» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից չի կատարվել, այսպես՝ «Կոտայքի ՃՇՇ» ՍՊԸ-ի և «Ճանապարհ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը կազմվել և ներկայացվել են հրավերի պահանջներին անհամապատասխան, մասնավորապես՝ «Կոտայքի ՃՇՇ» ՍՊԸ-ի գնային առաջարկը սխալ է լրացված՝ տառերով և թվերով գրվածները չեն համապատասխանում իրար, ինչպես նաև գնային առաջարկում չափաբաժնի համարը չի համապատասխանում աշխատանքի անվանման հետ, իսկ «Ճանապարհ» ՍՊԸ-ի տուժանքի մասին համաձայնագրում (մասնակցության հայտի ապահովում) մասնակցի կողմից սխալ է լրացված գնման առարկայի անվանումը, որը չի համապատասխանում Պատվիրատուի կողմից Ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկային, այսինքն՝ «Ճանապարհ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված տուժանքի մասին համաձայնագիրը չի համապատասխանում հրավերի պահանջներին:

Ընկերությունը գտնում է, որ խախտվել է «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետով սահմանված պահանջը:

Հիմք ընդունելով Օրենքի 48-րդ հոդվածը՝ Ընկերությունը ներկայացված բողոքով Խորհրդին խնդրել է՝

1. ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության կողմից հայտարարված «ՏԿՆ-ԲԸԱՇՁԲ-2017/2Շ» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշումները՝ «Կոտայքի ՃՇՇ» ՍՊԸ-ի և «Ճանապարհ» ՍՊԸ-ի հայտերը բավարար գնահատելու վերաբերյալ, ճանաչել ապօրինի:

2. Կիրառել ժամանակավոր միջոց և կասեցնել «ՏԿՆ-ԲԸԱՇՁԲ-2017/2Շ» ծածկագրով պայմանագրի կնքման գործընթացը՝ մինչ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի կողմից որոշման կայացումը, քանի որ պայմանագիր կնքվելու արդյունքում կդժվարանա Խորհրդի որոշման կատարումը:

«Ա և Ա Քոնստրաքշն» ՍՊԸ-ն՝ ի լրումն 07.07.2017թ. ներկայացված բողոքի, 13.07.2017թ. գրությամբ հայտնել է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում

հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում հայտերում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը կամ գնային առաջարկը կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

«Կոտայքի ՃՇՇ» ՍՊԸ-ն, մասնակցելով «ՏԿՆ-ԲԸԱՇՁԲ-2017/2Շ» ծածկագրով բաց ընթացակարգին, ներկայացրել է գնային առաջարկ, որում առկա է անհամապատասխանություն, մասնավորապես՝ «Կոտայքի ՃՇՇ» ՍՊԸ-ն հավելված թիվ 4-ի՝ գնային առաջարկի, 1-ին դաշտում որպես չափաբաժնի համար նշել է 1-ին չափաբաժին, սակայն որպես աշխատանքի անվանում նշել է Ընթացակարգի 2-րդ չափաբաժնով սահմանված գնման առարկայի անվանումը՝ Մ-4, Երևան-Սևան-Իջևան-Ադրբեջանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ 46+000-կմ 57+000 հատվածի հիմնանորոգման աշխատանքներ, ինչը նաև ապացուցվում է այն փաստով, որ մասնակիցը Ընթացակարգին մասնակցելու դիմումում նշել է, թե որ չափաբաժնին է ցանկանում մասնակցել:

Ընկերությունը գտնում է, որ նման պարագայում Պատվիրատուն պետք է առաջնորդվեր «Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասով, ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետով, ՀՀ ֆինանսների նախարարի հրամանով սահմանված՝ գնման ընթացակարգի օրինակելի ձևերով նախատեսված պարտադիր վավերապայմաններով և մերժեր Ընկերության հայտը, քանի որ բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող

հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են, ուստի հրավերի պահանջներին անհամապատասխան հայտերը պետք է մերժվեն, իսկ գնային առաջարկում արձանագրված անհամապատասխանությունները ենթակա չեն շտկման:

Պատվիրատուն «ՏԿՆ-ԲԸԱՇՁԲ-2017/2Շ» ծածկագրով բաց ընթացակարգի հրավերի թիվ 9 հավելվածով նախատեսված տուժանքի մասին համաձայնագրի 1.1 կետով սահմանել է, որ ընկերությունը մասնակցում է ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության կողմից կազմակերպված՝ Մ-4, Երևան-Սևան-Իջևան-Ադրբեջանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ 36+200կմ 64+174, 28 կմ հատվածի հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման «ՏԿՆ-ԲԸԱՇՁԲ-2017/2Շ» ծածկագրով բաց մրցութային ընթացակարգին:

«Ճանապարհ» ՍՊԸ-ն թիվ 9 հավելվածի՝ տուժանքի մասին համաձայնագրի, 1.1 կետում նշել է, որ Ընկերությունը մասնակցում է ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության կողմից կազմակերպված՝ Մ-4, Երևան-Սևան-Իջևան-Ադրբեջանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ 36+200կմ 64+174, 28կմ հատվածի հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման «ՏԿՆ-ԲԸԱՇՁԲ-2017/2Շ» ծածկագրով Մ-4, Երևան-Սևան-Իջևան-Ադրբեջանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ 36+000 կմ 46+000 հատվածի հիմնանորոգման աշխատանքների (չափաբաժին N 1) բաց մրցութային ընթացակարգին:

«Ճանապարհ» ՍՊԸ-ի կողմից խախտվել է ՀՀ ֆինանսների նախարարի հրամանով և Ընթացակարգի հրավերի՝ թիվ 9 հավելվածով սահմանված, գնման ընթացակարգի օրինակելի ձևերով նախատեսված պարտադիր վավերա-պայմանները:

Նման պարագայում, «ՏԿՆ-ԲԸԱՇՁԲ-2017/2Շ» ծածկագրով բաց ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, «Ճանապարհ» ՍՊԸ-ի հայտը բավարար գնահատելով, խախտել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասով, ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետով սահմանված պահանջները, քանի

որ ընկերության կողմից սխալ է նշվել գնման առարկայի անվանումը, որը նախատեսվել է Պատվիրատուի կողմից Ընթացակարգի հրավերով:

Ելնելով վերոգրյալից՝ Ընկերությունը Խորհրդին խնդրել է ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության կողմից կազմակերպված՝ Մ-4, Երևան-Սևան-Իջևան-Ադրբեջանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ 36+200կմ 64+174, 28 կմհատվածի հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՏԿՆ-ԲԸԱՇՁԲ-2017/2Շ» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշումները ապօրինի հայտարարելու փոխարեն, դադարեցնել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 21.06.2017թ. նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված՝ «Կոտայքի ՃՇՇ» ՍՊԸ-ի հայտը ընթացակարգի հրավերի պայմաններին համապատասխան գնահատելու, «Ճանապարհ» ՍՊԸ-ին 1-ին չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու և պայմանագիր կնքելու մասին որոշումները:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 18.07.2016թ. ժամը 12:00-ի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է 13.07.2017թ. գրությամբ Խորհրդին հայտնած դիրքորոշումը, ավելացնելով, որ չի պնդում 07.07.2017թ. բողոքով հայտնած այն դիրքորոշումը, ըստ որի «Կոտայքի ՃՇՇ» ՍՊԸ-ի գնային առաջարկը սխալ է լրացված՝ տառերով և թվերով գրվածները չեն համապատասխանում իրար:

2. <u>ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը</u>

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությունը 11.07.2017թ. թիվ 08/15.3/12676-17 գրությամբ Խորհրդին է ներկայացրել «ՏԿՆ-ԲԸԱՇՁԲ-2017/2Շ» ծածկագրով բաց ընթացակարգին վերաբերող անհրաժեշտ փաստաթղթերը:

Պատվիրատուն վերոհիշյալ գրությամբ հայտնել է, որ ուսումնասիրելով բողոքի առարկան, գտնում է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը հայտերը գնահատել է հրավերի պահանջներին համապատասխան, մասնավորապես՝

1. «Կոտայքի ՃՇՇ» ՍՊԸ-ի գնային առաջարկում տառերով և թվերով գրվածների մեջ անհամապատասխանություններ չկան, իսկ ինչ վերաբերվում է գնային առաջարկում չափաբաժնի համարի անհամապատասխանությանը, հարկ է նշել, որ Ընկերության հայտի հավելված 1-ի՝ դիմումի, մեջ նշված չափաբաժնի համարը համապատասխանում է գնային առաջարկի աշխատանքի անվանմանը:

2. «Ճանապարհ» ՍՊԸ-ի հավելված 9-ի՝ տուժանքի մասին համաձայնագրի, մեջ խախտում չի արձանագրվել, քանի որ գնման առարկայից բացի Ընկերությունը տուժանքի մասին համաձայնագրում ավելացրել է Ընթացակարգի հրավերով սահմանված այն չափաբաժնի անվանումը, որի համար ներկայացրել է հայտ:

Ամփոփելով վերոշարադրվածը, Պատվիրատուն հայտնել է, որ «Ա և Ա Քոնստրաքշն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքն անհիմն է և ենթակա է մերժման:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 18.07.2016թ. ժամը 12:00-ի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր պնդել են 11.07.2017թ. թիվ 08/15.3/12676-17 գրությամբ Խորհրդին ներկայացրած դիրքորոշումը:

3. <u>ԳԲԽ-ԱՄ-2017/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>

ԳԲԽ-ԱՄ-2017/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. << տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության կարիքների համար «Մ-4, Երևան-Սևան-Իջևան-Ադրբեջանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ 36+200կմ 64+174, 28 կմ հատվածի հիմնանորոգման աշխատանքներ»-ի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՏԿՆ-ԲԸԱՇՁԲ-2017/2Շ» ծածկագրով բաց ընթացակարգ, որին

մասնակցելու նպատակով, ի թիվս այլ մասնակիցների՝ հայտեր են ներկայացրել «Ա և Ա Քոնստրաքշն» ՍՊԸ-ն, «Ճանապարհ» ՍՊԸ-ն և «Կոտայքի ՃՇՇ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի հրավերի ՄԱՍ I-ում՝ գնման առարկայի բնութագրում նշվել է, որ գնման առարկա է հանդիսանում << տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության կարիքների համար՝ Մ-4, Երևան-Սևան -Իջևան - Ադրբեջանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ 36+200-կմ 64+174, 28կմ հատվածի հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերումը.

Չափաբաժի նների համարները	*Չափաբաժնի անվանումը*
1	Մ-4, Երևան-Սևան-Իջևան-Ադրբեջանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ 36+000- կմ 46+000 հատվածի հիմնանորոգման աշխատանքներ
2	Մ-4, Երևան-Սևան-Իջևան-Ադրբեջանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ46+000- կմ 57+000 հատվածի հիմնանորոգման աշխատանքներ
3	Մ-4, Երևան-Սևան-Իջևան-Ադրբեջանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ57+000-կմ64+174 հատվածի հիմնանորոգման աշխատանքներ

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 21.06.2017թ. ժամը 15:30-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ արձանագրվել է, որ «Ճանապար» ՍՊԸ-ն Ընթացակարգին մասնակցելու նպատակով հատ է ներկայացրել Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով, «Կոտայքի ՃՇՇ» ՍՊԸ-ն՝ 2-րդ չափաբաժնի մասով, իսկ «Ա և Ա Քոնստրաքշն» ՍՊԸ-ն՝ «ՎԵԿ ստրոյ» ՍՊԸ-ի հետ համատեղ գործունեության պայմանագրով (կոնսորցիում)՝ 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով:

4. Ընթացակարգի հրավերի ՄԱՍ I-ի 6-րդ կետի 6.1 ենթակետի համաձայն՝ Մասնակիցը հայտով՝ նույն հրավերով սահմանված կարգով, ներկայացնում է հայտի ապահովում և որոշում է հայտի ապահովման չափը, որը չի կարող պակաս լինել հայտով առաջարկվող գնի երկու տոկոսից:

Հայտի ապահովումը ներկայացվում է Մասնակցի կողմից միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի ձևով, որի նախագիծը ներկայացված է նույն հրավերի N 9 հավելվածով:

5. Ընթացակարգի հրավերի N 9 հավելվածը՝ տուժանքի մասին համաձայնագիրը, ներկայացվել է հետևյալ տեսքով.

Հավելված 9
ՏԿՆ-ԲԸԱՇՁԲ-2017/2Շ ծածկագրով
բաց ընթացակարգի հրավերի

ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N
(մասնակցության հայտի ապահովում)

ք. Երևան <<_____>>_____20 թ.

<<Ընկերության անվանումը>>, ի դեմս Ընկերության տնօրեն՝ <<Ընկերության տնօրենի անուն ազգանունը, անձնագրային տվյալները>>, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

1. ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Ընկերությունը մասնակցում է << տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված՝ Մ-4, Երևան-Սևան -Իջևան - Ադրբեջանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ 36+200-կմ 64+174, 28 կմ հատվածի հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման ՏԿՆ-ԲԸԱՇՁԲ-2017/2Շ ծածկագրով բաց մրցութային ընթացակարգին:

1.2 Որպես մասնակցության հայտի ապահովում, Ընկերությունը Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնությունը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից՝ համաձայն << կենտրոնական բանկի հաստատած՝ <<Վճարահաշվարկային գործառնությունների կատարման ժամանակ կիրառվող փաստաթղթերի նվազագույն վավերապայմանների և դրանց լրացման կանոնների>>:

1.3 Ընկերության կողմից գնման ընթացակարգին մասնակցելուց բխող պարտավորությունները («Գնումների մասին» << օրենքի 29 հոդվածի 2-րդ մաս) չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը (այսուհետ՝ մասնակցության հայտի ապահովման վճարման պահանջագիր) ներկայացնում է Ընկերությանը սպասարկող բանկին (այսուհետ՝ Բանկ)՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը:

1.4 Բանկը մասնակցության հայտի ապահովման վճարման պահանջագիրը ընդունում է կատարման՝ Պատվիրատուի կողմից սույն տուժանքի համաձայնագրի և Ընկերության կողմից գնման ընթացակարգին մասնակցելուց բխող պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու փաստը հաստատող փաստաթղթի բնօրինակները, որոնք նշվում են մասնակցության հայտի ապահովման վճարման պահանջագրում, Բանկին տրամադրվելու դեպքում:

1.5 Բանկի կողմից մասնակցության հայտի ապահովման վճարման պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) համար Բանկը պատասխանատվություն չի կրում:

1.6 Սույն համաձայնագիրը և կից մասնակցության հայտի ապահովման վճարման պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է <<ԱԲՌԱ Քրեդիթ Ռեփորթինգ>> ՓԲԸ (Վարկային բյուրո):

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և գործում է մինչև գնման ընթացակարգի շրջանակում կնքվելիք պայմանագրի ուժի մեջ մտնելը կամ գնման ընթացակարգում հաղթող չճանաչվելը կամ գնման ընթացակարգը չկայացված հայտարարելը:

2.2 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝

Ընկերության անվանումը՝
Հասցեն՝
Սպասարկող բանկի անվանումը,
ՀՀ
ՀՀՀ
տնօրեն՝ _____
_____ (ստորագրություն)

գլխ. հաշվապահ՝ _____
_____ (ստորագրություն)
Կ.Տ _____

6. «Ճանապարհ» ՍՊԸ-ի կողմից հայտին կից ներկայացվել է հայտի ապահովում՝ տուժանքի համաձայնության տեսքով, որի 1.1 կետում Ընկերության կողմից նշվել է հետևյալը.

1.1 Ընկերությունը մասնակցում է ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված՝ Մ-4, Երևան-Սևան -Իջևան -Ադրբեջանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ 36+200-կմ 64+174, 28 կմ հատվածի հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման «ՏԿՆ-ԲԸԱՇՁԲ-2017/2Շ» ծածկագրով Մ-4, Երևան-Սևան-Իջևան-Ադրբեջանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ 36+000- կմ 46+000 հատվածի հիմնանորոգման աշխատանքների (չափաբաժին N 1) բաց մրցույթային ընթացակարգին:

7. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 21.06.2017թ. ժամը 15:30-ի նիստի թիվ 3 արձանագրության 2-րդ կետի «գ» ենթակետով արձանագրվել է, որ ներկայացված գնային առաջարկների հիման վրա Ընթացակարգի թիվ 1 չափաբաժնով առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Ճանապար» ՍՊԸ-ն, իսկ 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով՝ «Սուարդի» ԲԲԸ-ն:

8. Նույն արձանագրության 2-րդ կետի «դ» ենթակետի համաձայն՝ առաջարկվել է Ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներին երեք աշխատանքային

օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

9. Ընթացակարգի հրավերի ՄԱՍ Ի-ի 4.3-րդ կետի «գ» ենթակետի համաձայն՝ Մասնակիցը հայտով ներկայացնում է՝ գնային առաջարկ:

10. «Կոտայքի ՃՇՇ» ՍՊԸ-ի կողմից հայտին կից ներկայացվել է Հավելված 4-ը՝ գնային առաջարկը, որտեղ Ընկերության կողմից չափաբաժնի համարը սյունակում նշվել է 1, իսկ աշխատանքի անվանումը սյունակում՝ Մ-4, Երևան-Սևան-Իջևան-Ադրբեջանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ 46+000-կմ 57+000 հատվածի հիմնանորոգման աշխատանքներ:

11. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 21.06.2017թ. ժամը 15:30-ի նիստի թիվ 3 արձանագրության 2-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ «Կոտայքի ՃՇՇ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատվել է բավարար, քանի որ համապատասխանում է հրավերով սահմանված պահանջներին:

4. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Խորհուրդն, ուսումնասիրելով «Ա և Ա Քոնստրաքշն» ՍՊԸ-ի 07.07.2017թ. բողոքը և ի լրումն բողոքի 13.07.2017թ. գրությունը՝ կից ներկայացված փաստաթղթերով, ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության 11.07.2017թ. թիվ 08/15.3/12676-17 գրությունը՝ կից փաստաթղթերով, «ՏԿՆ-ԲԸԱՇՁԲ-2017/2Շ» ծածկագրով բաց ընթացակարգի հրավերը, հայտնում է հետևյալը.

Օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի կողմից հաստատված հայտի ապահովումը:

Օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ մասնակիցը հայտով՝ հրավերով սահմանված կարգով ներկայացնում է հայտի ապահովում և որոշում է հայտի ապահովման չափը, որը չի կարող պակաս լինել հայտով առաջարկվող գնի երկու տոկոսից: Հայտի ապահովումը ներկայացվում է մասնակցի կողմից միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի ձևով:

Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: ***Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:***

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 35-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ հայտի ապահովում:

Կարգի 44-րդ կետի 4-րդ ենթակետը սահմանում է, որ ***հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են հրավերի պահանջներին համապատասխան ներկայացված գնային առաջարկը կամ հայտի ապահովումը:***

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում հայտերում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ***բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը կամ գնային առաջարկը կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան,*** ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Ընթացակարգի հրավերի՝ ՄԱՍ II-ի 1-ին կետի 1.2 ենթակետի համաձայն՝ ***նպատակահարմարության դեպքում Մասնակիցը պահանջվող տեղեկությունները կարող է ներկայացնել սույն հրահանգով առաջարկվող ձևերից տարբերվող՝ այլ ձևերով՝ պահպանելով պահանջվող վավերապայմանները:***

Մասնակցի կողմից հայտի ապահովումը և գնային առաջարկը ներկայացվում են ՀՀ ֆինանսների նախարարի 02.08.2013թ. թիվ 667-Ա հրամանով հաստատված գնումների գործընթացում օգտագործվող փաստաթղթերի օրնակելի ձևերի համաձայն:

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության կարիքների համար «Մ-4, Երևան-Սևան-Իջևան-Ադրբեջանի սահման միջպետական

նշանակության ավտոճանապարհի կմ 36+200կմ 64+174, 28 կմ հատվածի հիմնանորոգման աշխատանքներ»-ի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՏԿՆ-ԲԸԱՇՁԲ-2017/2Շ» ծածկագրով բաց ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ մասնակիցների՝ հայտեր են ներկայացրել «Ա և Ա Քոնստրաքշն» ՍՊԸ-ն, «Ճանապարհ» ՍՊԸ-ն և «Կոտայքի ՃՇՇ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ I-ում՝ գնման առարկայի բնութագրում նշվել է, որ գնման առարկա է հանդիսանում ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության կարիքների համար՝ Մ-4, Երևան-Սևան -Իջևան - Ադրբեջանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ 36+200-կմ 64+174, 28կմ հատվածի հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերումը.

Չափաբաժի նների համարները	*Չափաբաժնի անվանումը*
1	Մ-4, Երևան-Սևան-Իջևան-Ադրբեջանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ 36+000- կմ 46+000 հատվածի հիմնանորոգման աշխատանքներ
2	Մ-4, Երևան-Սևան-Իջևան-Ադրբեջանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ46+000- կմ 57+000 հատվածի հիմնանորոգման աշխատանքներ
3	Մ-4, Երևան-Սևան-Իջևան-Ադրբեջանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ57+000-կմ64+174 հատվածի հիմնանորոգման աշխատանքներ

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 21.06.2017թ. ժամը 15:30-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ արձանագրվել է, որ «Ճանապար» ՍՊԸ-ն Ընթացակարգին մասնակցելու նպատակով հատ է ներկայացրել Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով, «Կոտայքի ՃՇՇ» ՍՊԸ-ն՝ 2-րդ չափաբաժնի մասով, իսկ «Ա և Ա Քոնստրաքշն» ՍՊԸ-ն՝ «ՎԵԿ ստրոյ» ՍՊԸ-ի հետ համատեղ գործունեության պայմանագրով (կոնսորցիում)՝ 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով:

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ I-ի 6-րդ կետի 6.1 ենթակետի համաձայն՝ Մասնակիցը հայտով՝ նույն հրավերով սահմանված կարգով, ներկայացնում է հայտի ապահովում և որոշում է հայտի ապահովման չափը, որը չի կարող պակաս լինել հայտով առաջարկվող գնի երկու տոկոսից:

Հայտի ապահովումը ներկայացվում է Մասնակցի կողմից միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի ձևով, որի նախագիծը ներկայացված է նույն իրավերի N 9 հավելվածով:

Ընթացակարգի իրավերի N 9 հավելվածը՝ տուժանքի մասին համաձայնագիրը, ներկայացվել է հետևյալ տեսքով.

Հավելված 9
ՏԿՆ-ԲԸԱՇՁԲ-2017/2Շ ծածկագրով
բաց ընթացակարգի իրավերի

ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N
(մասնակցության հայտի ապահովում)

ք. Երևան <<_____>>_____20
թ.

<<Ընկերության անվանումը>>, ի դեմս Ընկերության տնօրեն՝ <<Ընկերության տնօրենի անուն ազգանունը, անձնագրային տվյալները>>, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

3. ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ

1.7 Ընկերությունը մասնակցում է << տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված՝ Մ-4, Երևան-Սևան -Իջևան - Ադրբեջանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ 36+200-կմ 64+174, 28 կմ հատվածի հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման ՏԿՆ-ԲԸԱՇՁԲ-2017/2Շ ծածկագրով բաց մրցութային ընթացակարգին:

1.8 Որպես մասնակցության հայտի ապահովում, Ընկերությունը Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնությունը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից՝ համաձայն << կենտրոնական բանկի հաստատած՝ <<Վճարահաշվարկային գործառնությունների կատարման ժամանակ կիրառվող փաստաթղթերի նվազագույն վավերապայմանների և դրանց լրացման կանոնների>>:

1.9 Ընկերության կողմից գնման ընթացակարգին մասնակցելուց բխող պարտավորությունները («Գնումների մասին» << օրենքի 29 հոդվածի 2-րդ մաս) չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը (այսուհետ՝ մասնակցության հայտի ապահովման վճարման պահանջագիր) ներկայացնում է Ընկերությանը սպասարկող բանկին (այսուհետ՝ Բանկ)՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը:

1.10 Բանկը մասնակցության հայտի ապահովման վճարման պահանջագիրը ընդունում է կատարման՝ Պատվիրատուի կողմից սույն տուժանքի համաձայնագրի և Ընկերության կողմից գնման ընթացակարգին մասնակցելուց բխող պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու փաստը հաստատող փաստաթղթի բնօրինակները, որոնք նշվում են մասնակցության հայտի ապահովման վճարման պահանջագրում, Բանկին տրամադրվելու դեպքում:

1.11 Բանկի կողմից մասնակցության հայտի ապահովման վճարման պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) համար Բանկը պատասխանատվություն չի կրում:

1.12 Սույն համաձայնագիրը և կից մասնակցության հայտի ապահովման վճարման պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ

կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է <<ԱՔՈԱ Քրեդիթ Ռեփորթինգ>> ՓԲԸ (Վարկային բյուրո):

4. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և գործում է մինչև գնման ընթացակարգի շրջանակում կնքվելիք պայմանագրի ուժի մեջ մտնելը կամ գնման ընթացակարգում հաղթող չճանաչվելը կամ գնման ընթացակարգը չկայացված հայտարարելը:

2.2 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝

Ընկերության անվանումը՝
Հասցեն՝
Սպասարկող բանկի անվանումը,
ՀՀ
ՀՎՀՀ
տնօրեն՝ _____
_____ (ստորագրություն)

գլխ. հաշվապահ՝ _____
_____ (ստորագրություն)
Կ.Տ _____

«Ճանապարհ» ՍՊԸ-ի կողմից հայտին կից ներկայացվել է հայտի ապահովում՝ տուժանքի համաձայնության տեսքով, որի 1.1 կետում Ընկերության կողմից նշվել է հետևյալը.

1.1 Ընկերությունը մասնակցում է ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված՝ Մ-4, Երևան-Սևան -Իջևան -Ադրբեջանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ 36+200-կմ 64+174, 28 կմ հատվածի հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման «ՏԿՆ-ԲԸԱՇՁԲ-2017/2Շ» ծածկագրով ***Մ-4, Երևան-Սևան-Իջևան-Ադրբեջանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ 36+000- կմ 46+000 հատվածի հիմնանորոգման աշխատանքների (չափաբաժին N 1) բաց մրցույթային ընթացակարգին:***

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 21.06.2017թ. ժամը 15:30-ի նիստի թիվ 3 արձանագրության 2-րդ կետի «գ» ենթակետով արձանագրվել է, որ ներկայացված գնային առաջարկների հիման վրա Ընթացակարգի թիվ 1 չափաբաժնով առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Ճանապար» ՍՊԸ-ն:

«Ա և Ա Քոնստրաքշն» ՍՊԸ-ն գտնում է, որ «Ճանապարհ» ՍՊԸ-ի կողմից խախտվել է ՀՀ ֆինանսների նախարարի հրամանով և Ընթացակարգի հրավերի՝ թիվ 9 հավելվածով սահմանված, գնման ընթացակարգի օրինակելի ձևերով նախատեսված պարտադիր վավերապայմանները:

Ելնելով վերոգրյալից՝ Խորհուրդն արձանագրում է, որ «Ճանապարհ» ՍՊԸ-ն՝ հավելված 9-ի՝ տուժանքի մասին համաձայնագրի, 1.1 կետում՝ Ընթացակարգի հրավերի հավելված 9-ով նախատեսված գնման առարկայից բացի, նշելով այն չափաբաժնի գնման առարկայի անվանումը, որին Ընկերությունը մասնակցության հայտ է ներկայացրել, չի խախտել գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջները, քանի որ Ընթացակարգի հրավերի՝ ՄԱՍ II-ի 1-ին կետի 1.2 ենթակետի համաձայն՝ ***նպատակահարմարության դեպքում Մասնակիցը պահանջվող տեղեկությունները կարող է ներկայացնել սույն հրահանգով առաջարկվող ձևերից տարբերվող՝ այլ ձևերով՝ պահպանելով պահանջվող վավերապայմանները:***

Հետևաբար, Խորհուրդը գտնում է, որ Պատվիրատուն, բավարար գնահատելով «Ճանապարհ» ՍՊԸ-ի հայտը, գործել է իրավաչափ, քանի որ գնման առարկան չի կարող դիտվել որպես պահանջվող վավերապայման և չի կարող հայտի մերժման հիմք հանդիսանալ:

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ I-ի 4.3-րդ կետի «գ» ենթակետի համաձայն՝ Մասնակիցը հայտով ներկայացնում է՝ գնային առաջարկ:

«Կոտայքի ՃՇՇ» ՍՊԸ-ի կողմից հայտին կից ներկայացվել է Հավելված 4-ը՝ գնային առաջարկը, որտեղ Ընկերության կողմից չափաբաժնի համարը սյունակում նշվել է 1, իսկ աշխատանքի անվանումը սյունակում՝ Մ-4, Երևան-Սևան-Իջևան-Ադրբեջանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ 46+000-կմ 57+000 հատվածի հիմնանորոգման աշխատանքներ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 21.06.2017թ. ժամը 15:30-ի նիստի թիվ 3 արձանագրության 2-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ «Կոտայքի ՃՇՇ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատվել է բավարար, քանի որ համապատասխանում է հրավերով սահմանված պահանջներին:

Այսպես, Կարգի 44-րդ կետի 4-րդ ենթակետը սահմանում է, որ ***հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են***

հրավերի պահանջներին համապատասխան ներկայացված գնային առաջարկը կամ հայտի ապահովումը:

Կարգի 45-րդ կետը սահմանում է, որ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում հայտերում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ***բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը կամ գնային առաջարկը կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան,*** ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Ելնելով վերոգրյալից, Խորհուրդն արձանագրում է, որ Ընկերության կողմից ներկայացված հավելված 4-ը՝ գնային առաջարկը, ներկայացված է Ընթացակարգի հրավերի պահանջներին անհամապատասխան, մասնավորապես՝ ***«Կոտայքի ՃՇՇ» ՍՊԸ-ն Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել թիվ 2-րդ չափաբաժնի համար, մինչդեռ Հավելված 4-ի՝ գնային առաջարկի, չափաբաժնի համարը սյունակում նշել է 1, իսկ աշխատանքի անվանումը սյունակում նշել է Ընթացակարգի թիվ 2-րդ չափաբաժնով նախատեսված գնման առարկայի անվանումը՝ Մ-4, Երևան-Սևան-Իջևան-Ադրբեջանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ 46+000-կմ 57+000 հատվածի հիմնանորոգման աշխատանքներ:***

Հետևաբար, Խորհուրդը գտնում է, որ Պատվիրատուն, բավարար գնահատելով «Կոտայքի ՃՇՇ» ՍՊԸ-ի հայտը, խախտել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասով, ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի 4-րդ ենթակետով և Կարգի 45-րդ կետով սահմանված պահանջները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

ՈՐՈՇԵՑ

«Ա և Ա Քոնստրաքշն» ՍՊԸ-ի 07.07.2017թ. ներկայացրած բողոքը բավարարել մասնակի՝

1. դադարեցնել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 21.06.2017թ. ժամը 15:30-ի նիստի թիվ 3 արձանագրության 2-րդ կետի «ա» ենթակետով կայացված՝ «Կոտայքի ՃՇՇ» ՍՊԸ-ի հայտը բավարար գնահատելու մասին, որոշումը:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 21.06.2017թ. ժամը 15:30-ի նիստի թիվ 3 արձանագրության 2-րդ կետի «գ» ենթակետով կայացված՝ 1-ին չափաբաժնի մասով «Ճանապարհ» ՍՊԸ-ին առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու և պայմանագիր կնքելու մասին որոշումները դադարեցնելու վերաբերյալ պահանջները մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝ ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ